Կարինե ԲԱՉԵՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԺԱՆԵԿԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Ալեքսանդրապոլում տարածված կանանց բազմաթիվ արհեստների շարքում ուրույն տեղ է գրավում ժանեկագործությունը:

Ժանեկագործությունը ժողովրդական կիրառական-գեղազարդման արվեստի ամենանուրբ և միակ ճյուղն է, որով բացառապես զբաղվել են կանայք: Ժանյուկը առանց կտորի հիմքի մետաքսյա, բամբակյա, բրդյա, մետաղյա և այլ թելերով ստեղծվող ցանցկեն գործվածք է:[1] «Ժանյակ» բառեզր (տերմինը) առաջացել է XIX դ. վերջին և կիրառվում է բացառապես գրական լեզվում: Արվեստներին և գիտությանը նվիրված իր բառարանում Մ.Քաջունին է առաջին անգամ օգտագործել այդ բառեզր, բացատրելով. «Ժանեակ, տճ. թանթելա. Անկուած թեթև, երևելի, ծաղկենկար, և եզերքն ժանեկաւոր, ասեղնէգործ և թել ի թել: Ժանեակին յորինեալք ի թելոյ կտաւոյ յարգոյք են յոյժ, և նոքին իսկ են բուն ժանեակք»:[2] Ժողովուրդը *ժանյակի* համար գործածում էր ինչպես հայերեն՝ քարբառային, այնպես էլ օտարալեզու տերմիններ: Հատկանշական է, որ այս դեպքում բառեզրերը տարբերվում են ժանյակի տեխնիկային համապատասխան: Միայն մեր ժողովրդին բնորոշ ասեղնագործ ժանյակները առավելապես հայտնի էին ասեղնագործ (համահայկական), ասոդ բուրմ (Բարձր Հայք) և ճուք (Վան-Վասպուրական) անուններով: Արևմտյան Հայաստանում ասեղնագործ ժանյակները հայտնի էին նաև «օյա» և «խարջ» օտարածին անուններով:[3]

Հայ կանայք և աղջիկները տիրապետել են ժանյակ հյուսելու գրեթե բոլոր եղանակներին՝ ասեղով, կեռասեղ-հեղուկով, որը Ալեքսանդրապոլում կոչվում էր «չանգալ», գոբելենակով, մեծ և փոքր մաքոքներով, գուլպայի ճաղերով («միլ»): Ալեքսանդրապոլում տարածված էին ժանյակի հիշյալ բոլոր տեսակները, սակայն, ինչպես ողջ Հայաստանում, այնպես էլ այստեղ առավել սիրվածն ու կիրառվածը ասեղնագործ ժանյակն էր: Հայ ժողովրդական արվեստի հմուտ գիտակ Ս.Դավթյանը հայկական ասեղնագործ ժանյակի մի քանի կենտրոնների թվում առանձնացնում է նաև Ալեքսանդրապոլի (Բարձր Հայքի) դպրոցը:[4]

Ալեքսանդրապոլի քաղաքային կենցաղում ժանյակն ուներ նույն հարգարժան տեղն ու նշանակությունը, ինչ ասեղնագործությունը, և դա է պատճառը, որ ժողովրդի մեջ դրանք ընկալվել են որպես մեկ ընդհանուր զբաղմունք՝ ձեռագործ անվամբ: XIX դ. վերջին-XX դ. սկզբին ժանեկագործական մշակույթը Ալեքսանդրապոլում լայն տարածում և բազմազան գործածություն էր ստացել, ինչը պայմանավորված էր մի շարք գործոններով: Առաջինն ու կարևորագույնը կնոջ ավանդական հագուստի համալիրում ժանեկազարդ թանթանա-վարդի առկայությունն է, որը լինելով Բարձր Հայքի կանանց տոնական տարազի գլխի հարդարանքի բաղկացուցիչ մաս՝ իր ձևով և կատարման տեխնիկայով բացառիկ երևույթ է (նկ. 1): Այն իրենից ներկայացնում է օղակաձև ճակատակապ՝ քունքերի վրա երկու անվաձև բարձիկներով, որոնք պատված են թավշյա կտորով: Բարձիկներն ու դրանց միջև ընկած մակերեսը զարդարվում էին ասեղնագործ ժանյակով(օյա):[5]

Ժանյակները հյուսվում էին բազմազույն մետաքսյա թելերով և շատ խիտ հյուսքով, որի ժամանակ ռոմբաձև օղակ-անցքերը հորիզոնական թելով կիսվում էին երկու փոքր եռանկյունների և հյուսքը ստացվում էր եռանկյունաձև մանր անցքերով:[6] Վարդը զարդարվում էր գերազանցապես ծաղիկներով, տերևներով, երբեմն նաև թռչուններով: Ծաղիկները կատարվում էին հնարավորինս ռեալիստորեն, բնական գույ-

---

[1] *Հայկական սովետական հանրագիտարան, հ. 4, Եր., 1978, էջ 278:*

[2] *Մանուել վարդապետ Քաջունի, Բառագիրք արուեստից եւ գիտութեանց, Վենետիկ, 1891, էջ 645:*

[3] *Ս. Դ ա վ թ յ ա ն, Հայկական ժանյակ, Եր., 1966, էջ 10:*

[4] *С. Д а в т я н, Армянские кружева и их распространение, М., 1964, стр. 2.*

[5] *Ն. Ա վ ա գ յ ա ն, Հայկական ժողովրդական տարազը, Եր., 1983, էջ 72:*

[6] *Ս. Դ ա վ թ յ ա ն, նշվ. աշխ., էջ 21:*

ներով ու ձևերով: Սիրված էին հատկապես մանուշակները, շուշանները, զանգակածաղիկները, վարդերը, նարգիզները, որոնք անպայման ամրացվում էին կանաչ ցողուններով և տերևներով կազմված դաշտի վրա: Որպեսզի ծաղիկները ամուր կանգնեն, թերթիկները չթուլանան և գեղեցիկ բացվածքով մնան, հաճախ դրանց հիմքում անցկացնում էին բարակ մետաղալար, որը փաթաթվում էր կանաչ թելով: Ծաղիկների և տերևների եզրերում ամրացնում էին ձիու մազ, որ ժանյակը տեսքը չկորցնի: Հետաքրքիր է, որ նախշին ռելիեֆություն հաղորդելու համար ձիու մազը գործածվել է նաև ֆրանսիական ժանյակում:[7]



Նկ. 1

Վարդի համար պատրաստվող ժանյակները աշխատանքի նրբության և բարդ ու աշխատատար տեխնոլոգիայի պատճառով հասու չէին ամենքին, ուստի քաղաքում առանձնացել էին թանթանա գործող հատուկ վարպետներ, որոնք հայտնի էին ոչ միայն Ալեքսանդրապոլում, այլև նրա սահմաններից դուրս: Սրանք աշխատում էին տնայնագործական եղանակով, սակայն արտադրանքը դուրս էր հանվում շուկա և մեծ պահանջարկ ուներ հատկապես Շիրակի պատմագգագրական մարզի գյուղական բնակչության մեջ, որը մինչև XX դ. առաջին քառորդը շարունակում էր կրել ավանդական հագուստը:

Նման ասեղնագործ ժանյակները XIX դ. վերջին գործածվում էին նաև որպես եզրազարդ գլխաշոր-յազմայի համար: Յազմաները դաջազարդ, գունավոր նախշերով քառանկյուն ծածկոցներ էին, որոնք լայն տարածում ունեին Արևմտյան Հայաստանում: Հատկանշական է, որ Կիլիկիայում և Փոքր Հայքում դրանց ժանյակները հյուսվում էին գերազանցապես փոքր մակույկով, մինչդեռ Բարձր Հայքում և դրա մշակույթը կրող ու շարունակող Ալեքսանդրապոլում՝ միայն ասեղով, ընդ որում, ժանյակի զարդանախշերը թե՛ գույնով, թե՛ նախշերով կրկնում էին վարդի նախշերը: Յազմայի համար նախատեսված ժանյակե ժապավենները վարպետները գործում էին տասնյակ մետրերով և վաճառում յազմայագործներին:

XX դ. սկզբին ժանյակը լայնորեն գործածվում է նաև եվրոպական նորաձև հագուստի մեջ, որը կրում էին քաղաքի մեծահարուստ ընտանիքների բարձրաշխարհիկ տիկնայք և օրիորդներ: Երևան, Ալեքսանդրապոլ, Ախալցխա, Ախալքալաք և այլ քաղաքներում երիտասարդների տարազում մեծ տարածում ստացավ նորատիպ, փեշի մասում ծալաբոլորքով շապիկը՝ եզրերն ասեղնագործ կամ ժանեկագործ երիզներով: Նման եզր էր ունենում նաև երիտասարդ կնոջ վարտիքը:[8]

Ալեքսանդրապոլում ժանյակի լայն տարածվածությանը նպաստող մյուս գործոնը դա քաղաքային նոր կենցաղի ձևավորումն էր, նոր տիպի բնակարանների կառուցումն ու դրանց ներսույթի նորովի հարդարումը: XIX դ. վերջից քաղաք մուտք գործած նորաձև կահույքն առաջացրեց ժանյակե և ժանեկագարդ իրերի նոր տեսակների՝ վարագույրների, ծածկոցների, սփռոցների, տակդիրների և այլ իրերի անհրաժեշտություն և կիրառություն: Ալեքսանդրապոլի ժանյակն իր ողջ բազմազանությամբ ու ճո-

---

[7] *Н. Бирюкова., Западноевропейское кружево 16-19 вв. в собрании Эрмитажа, Ленинград, 1959, стр. 11.*

[8] *Ս. Պողոսյան, Ներքնազգեստը հայոց տարազի համակարգում, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» հանրապետական V գիտաժողովի հիմնադրույթներ, Գյումրի, 2002, էջ 34-35:*

խուրյամբ դրսևորվում էր հենց կենցաղային նոր իրերի մեջ: Առօրյա գործածության ժանյակներն արվում էին տարբեր տեխնիկաներով և գերազանցապես սպիտակ գույնի բամբակյա թելերով: Ասեղնագործ ժանյակներն առավելապես փոքր չափի իրեր էին. տակդիրներ՝ բաժակների, մրգամանների, ծաղկամանների տակ դնելու և վրան գցելու համար, ինչպես նաև փոքր ծածկոցներ՝ զարդասեղանների, ձեռագործի, հարդարանքի, ինքնաեռի սեղանների համար: Դրանք տարբեր ձևեր ունեին՝ կլոր, քառակուսի, ձվաձև, շեղանկյուն և այլն (նկ.2, 3, 4): Միրված ու տարածված զարդանախշը աստղաձաղիկն էր, որը լրացվում էր երկրաչափական պատկերներով (նկ. 2, 3): Ինչպես ողջ Հայաստանի, այնպես էլ Ալեքսանդրապոլի ասեղնագործ ժանյակների զարդահամալիրը խիստ ինքնատիպ է և բոլորովին տարբերվում է արևմտաեվրոպական և ռուսական ժանյակներից: Առանձնահատկությունը կայանում է ինչպես զարդանախշերի, այնպես էլ դրանց դասավորման կարգի մեջ: Ռուսական և երկրաչափական պատկերները դասավորվում էին համակենտրոն շերտերով և ռիթմիկ շարքերով: Ինչ ձև էլ ունենար ժանյակը՝ շրջանաձև (որն առավել ընդունվածն ու տարածվածն էր), քառակուսի թե օվալաձև, անպայման ունենում էր կենտրոն, որի շուրջը տարբեր չափերի իրար հաջորդող շերտերում շարվում էին զարդանախշերը: Յուրաքանչյուր զարդաշրջանակ անջատվում էր մյուսից կամրջակների, այունիկների շարքերով կամ ցանցկեն հյուսքի շերտերով: Շատ հաճախ ժանյակը կազմվում էր առանձին գործված և իրար ամրացված վարդյակների (ապլիկացիա) ռիթմիկ շարքերից:[9] Մեծածավալ իրեր՝ ծածկոցներ, սփռոցներ, փոքր վարագույրներ, գործելու համար նախ հյուսվում էր ցանց, ապա լցվում տարբեր զարդապատկերներով:

Նկ. 2

Նկ. 3



Նկ. 4

Նկ. 5

Ալեքսանդրապոլի ասեղնագործ ժանյակն իր զարդանկարների առանձին նախշերով ու հորինվածքներով մեծ նմանություն ունի կիրառական-գեղազարդման արվեստի այլ ճյուղերի և հատկապես ոսկերչության հետ: Ալեքսանդրապոլի մանրադրուք զուգաթելի տեխնիկայով պատրաստված զարդերը մետաղյա ժանյակների տպավորություն են թողնում: Մեծ ընդհանրություններ կան նաև տարազի ոսկեթել ասեղնագործության հետ:

---

[9] *Կ. Բ ա զ ե յ ա ն, Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ), տետր, 1985, Լենինական:*

XIX դ. վերջին- XX դ. սկզբին քաղաքում լայն տարածում ուներ հելունագործ ժանյակը: Հելունը կամ կեռասեղը (չանգյալ) ամենատարածված և ամենահին գործիքներից մեկն է, որն առավելապես տարածված էր Արևելքում: Եթե ասեղնագործ ժանյակի ժապավենները հայտնի էին օյա անունով, ապա հելունագործ և գոբենակագործները կոչվում էին հաշյա:[10] Հելունագործ ժանյակի իրերը հիմնականում մեծածավալ են՝ վարագույրներ, անկողնու ծածկոցներ, բարձի ծածկոցներ և այլն: Առավել պարզ ու մատչելի տեխնիկայի շնորհիվ հելունագործ իրերը XX դ. սկզբից սկսեցին դուրս մղել նույնիսկ ասեղնագործ ժանյակներին: Այդ գործիքը հարմար էր ամենատարբեր հաստության թելերի հյուսման: Այս դեպքում ևս գերակշռողը սպիտակ և փղոսկրի գույնն էր: Բացի մեծածավալ իրերից հելունով գործում էին նաև ժապավեններ, որոնք գործածվում էին որպես եզրազարդեր անկողնու սպիտակեղենի և կանանց ներքնազգեստի համար:

XIX դ. երկրորդ կեսից Ալեքսանդրապոլում երևան եկավ նաև գոբենակի ժանյակը:[11] Գոբենակն իրենից ներկայացնում է բարձիկ և փայտե կոճիներ, որոնց վրա փաթաթվում է թելը: Ժանյակ հյուսելու համար բարձիկի վրա ամրացնում են զարդանախշերի նկարները, որոնց վրա անցքեր են արված: Այդ անցքերում քորոցներ են ամրացվում ու դրանց շուրջը փաթաթում, պտտում են թելերը որոշակի ուղղությամբ: Գոբենակով հյուսում են ինչպես երկար ժապավենաձև, այնպես էլ տարբեր չափերի առանձին ժանյակներ, որոնք իրար միացնելով ստանում էին խոշոր չափերի առարկաներ: Ժանյակի այս տեսակը կիրառվում էր որպես ծածկոց, տակդիր, վարագույր, ինչպես նաև օձիք: Ամենատարածված գործածությունն ունեին գոբենակագործ ժապավենները, որոնք ծառայում էին որպես եզրազարդ անկողնու սպիտակեղենի համար: Գոբենակի ժանյակը հյուսվում էր ինչպես բամբակյա, այնպես էլ մետաքսյա և վուշե սև ու սպիտակ թելերով:

Ալեքսանդրապոլում տարածված ժանյակի մյուս գործիքը մեծ մակույկն է (մաքոք): Վերջինս երկմաս գործիք է, բաղկացած ձողիկից՝ թրից, որի վրա հյուսվում էր ժանյակը և որի հաստությունով պայմանավորված էր ժանյակի անցքերի մեծությունը, ինչպես նաև երկու ծայրերում երկճղի՝ եղանակման ձողից, որի վրա փաթաթվում է գործող թելը: Այս գործիքը մարդկությանը հայտնի ամենահին գործիքն է, քանի որ սրանով հյուսվում է նաև ձկնորսական ցանցը: Մեծ մակույկի ժանյակը Ալեքսանդրապոլում հայտնի էր ֆիլե անունով:[12] Մեծ մակույկով գործում էին խոշոր չափերի ժանյակ-ծածկոցներ՝ սեղանի, անկողնու, բարձերի, ինչպես նաև վարագույրների համար (նկ. 5): Գործածական էին նաև փոքր չափերի ժանյակները, որոնք ամրացվում էին գործվածքների վրա որպես զարդ: Այս տեսակի ժանյակը ևս հյուսվում էր առավելապես սպիտակ բամբակյա թելերով: Ալեքսանդրապոլում հայտնի էին վարպետներ, որոնք գործում էին միայն ժանյակի ցանցը՝ պատվերով, որոնք առանձին անհատներ գնում էին և զարդանախշում ըստ իրենց ճաշակի:

Համեմատաբար քիչ տարածում ուներ փոքր մակույկը (մաքոքը): Այն քաղաք է մուտք գործել XX դ. սկզբից, ինչը կապված է արևմտահայերի և կիլիկիահայերի մասնավոր ներգաղթով դեպի քաղաք:

Ալեքսանդրապոլում ժանեկագործության զարգացմանը նպաստող գործոններից էր նաև օժիտի ինստիտուտը:[13] Ինչպես ողջ հայ ժողովրդի, այնպես էլ ալեքսանդրապոլցիների կենցաղում օժիտին մեծ կարևորություն էր տրվում: Յուրաքանչյուր ընտանիքի համար պատվի գործ էր հավուր պատշաճի և առավելագույնս բազմազան օժիտի պատրաստումը: Օժիտը պատրաստում էին նախապես՝ մինչև ամուսնանալը և աղջկա ձեռքով կարված, հյուսված ու ասեղնագործված իրերի առկայությունը պարտադիր էր, քանի որ վկայում էր նրա շնորհքը, ճաշակը, վարպետությունը և այլն, որ հատկանիշները խիստ կարևորվում էին հարսնացու ընտրելիս:

---

[10] *Կ. Բ ա զ ե յ ա ն, ԴԱՆ, տետրեր 1982, 1985,1986, Ախալքալաք, Լենինական, Ախալցխա:*
[11] *Ս. Դ ա վ թ յ ա ն, նշվ. աշխ., էջ 16:*
[12] *Կ. Բ ա զ ե յ ա ն, ԴԱՆ, 1985:*
[13] *Է. Կ ա ր ա պ ե տ յ ա ն, Օժիտը հայոց մեջ, Եր., 1978:*

Ալեքսանդրապոլում օժիտը ցուցադրվում էր ոչ միայն հարսանիքից հետո՝ փեսայի տանը, այլև առաջ՝ հարսնացուի տանը և այս սովորույթը պահպանվել է մինչև օրս:[14] Օժիտի յուրաքանչյուր իրի ցուցադրությունն արվում էր մերձավոր կին ազգականների ներկայությամբ: Հյուրերը գովաբանում էին հարսի և նրա մոր վարպետությունը՝ «տասը մատի տասը հունարը», «ոսկի ձեռները» և այլն, որն էլ հայ կնոջ և հայ աղջկա գերագույն նպատակներից էր կյանքում: Թերևս օժիտի ցուցադրությունը, ստացած գովասանքներն ու օրհնանքներն էին այն հիմնական պատճառը, որ հայ կանայք մեծ տեղ են ավել ձեռարվեստին և աղջկան դաստիարակել նույն ոգով: Դրանով կարելի է բացատրել քաղաքում գործող իգական դպրոցներում և գիմնազիաներում ձեռարվեստի պարտադիր դասավանդումը: Կանանց արհեստների՝ այդ թվում ասեղնագործության և ժանեկագործության վարպետների պահանջարկն էր պատճառը, որ քաղաքում բացվեց արհեստագործական ուսումնարանը՝ առանձին մասնագիտությունների գծով վարպետներ և ենթավարպետներ պատրաստելու նպատակով:[15] Անհրաժեշտ է փաստել, որ Մեծ Եղեռնից հետո Ալեքսանդրապոլում բացված որբանոցներում ևս ձեռագործի դասավանդմանը մեծ կարևորություն էր տրվում: Շիրակի և Արագածոտնի մարզերում ասեղնագործ ժանյակի վարպետ-բանասացներից շատերը իրենց հմտությունը ձեռք էին բերել հենց որբանոցում:[16]

Ինչպես ասեղնագործության, այնպես էլ ժանեկագործության գործընթացում առաջացել էին մի շարք սովորույթներ, արարողություններ, որոնց մի մասն ուղղակի արտահայտում է ժողովրդի վերաբերմունքը ձեռագործի նկատմամբ: Ըստ իմ հավաքած դաշտային ազգագրական նյութերի, առանձնացվում են աշխատանքի սկզբի և ավարտի հետ կապված՝ ծիսական բնույթ ունեցող բարեմաղթանքները, աշխատանքի ընթացքում արվող և ձեռագործի հաջող ընթացքը ապահովող գործողությունները, ասեղնագործության և ժանյակի նկատմամբ կիրառվող արգելանքները և ձեռագործը եկեղեցուն նվիրաբերելու սովորույթը:

Սովորաբար ամեն աշխատանք սկսելուց առաջ, վարպետն աղոթք էր անում՝ ուղղված ամենատարբեր սրբերին և Աստծուն: Սակայն այն առավելագույնս էր դրսևորվում օժիտի համար արվող ժանյակների հյուսքի ընթացքում: Ձեռագործող աղջկան մաղթում էին.«քարով ջխտվես», «ջուխտ մնաս» և այլն: Աշխատանքի ավարտից հետո ասում էին. «Աստված շնորհավոր անի», «Բարով բանեցնես, թող ուրախություն լինի» և այլն:[17]

Հայոց մեջ օժիտն ասեղնագործում էր ինքը՝ հարսնացուն: Հաճախ ձեռագործն արվում էր խմբովի, այսինքն՝ հավաքվում էին հասակակից աղջիկները իրենց բանվածքներով և միասին գործում: Դա միաժամանակ մրցակցություն էր առաջացնում նրանց միջև, թե ով է ամենալավ գործողը: Գործընթացն ուղեկցվում էր երգերով, կատակներով և զրույցներով: Որոշակի սովորույթներ և արարողություններ էին պահպանվել՝ կապված ձեռագործի հաջող ընթացքի հետ: Սրանք ևս ունեն ծիսական բնույթ: Առաջին հերթին դա կապված էր «չար աչքի» հետ: Նման համբավ ունեցող մարդկանց հանդիպելիս կամ նրանց տուն մտնելիս ձգտում էին աշխատանքը թաքցնել, որ «աչքով չտա»: Նրանց գնալուց հետո, երբ գործն առաջ չէր գնում, անիծում էին «չար աչքի» տիրոջը, ապա ետևից աղ էին լցնում կրակի մեջ, ձախ ուսի վրայով երեք անգամ թքում ետ, իրենց կսմթում, կամ վերջապես, աղոթել էին տալիս թե՛ իրենց և թե՛ ձեռագործը:[18]

Ինչպես հայտնի է, ասեղը, ասեղ-թելը և ասեղով ծակելը ինքնին ունեն չարխափան նշանակություն, շատ ժողովուրդների առասպելաստեղծ պատկերացումներում

---

[14] Կ. Բաղեյան, ԴԱՆ,1985:

[15] Այդ մասին մանրամասն տես Կ.Բաղեյան, Ասեղնագործությունը և ժանեկագործությունը Ալեքսանդրապոլի արհեստների համակարգում, Գիտական աշխատություններ հ.Ի, Գյումրի, 1998, էջ 111-118:

[16] Կ. Բաղեյան, ԴԱՆ, տետր, 1985:

[17] Նույնը:

[18] Կ. Բաղեյան, ԴԱՆ, տետրեր 1982,1985, 1986:

մեծ դեր խաղալով տիեզերական դեներին ոչնչացնելու գործում (սա կապվում էր մետաղի՝ որպես չարխափան միջոցի, պաշտամունքի հետ):[19]

Ժողովրդի մեջ հատկապես ընդունված էր եկեղեցուն և սրբատեղիներին շուշփա նվիրելը: Եկեղեցական անձեռոցիկ-դաստառուկը, ըստ Մաղաքիա Օրմանյանի, այն սպասքն էր, որը եկեղեցուն նվիրում էին հատկապես նոր ձեռագործի վարժվող օրիորդներն ու բարեպաշտուհիները՝ ակնկալելով ձեռագործի հաջողությունը:[20]

Այսպիսով, ժանյակը Ալեքսանդրապոլի քաղաքային կենցաղում կատարում էր առօրյա-կիրառական, գեղազարդման-գեղագիտական, տոնական-հարգարժան, ծիսական, էթնիկական գործառույթներ, որոնցով էլ կարևորվում էր որպես ուրույն երևույթ ողջ մշակութային համալիրի մեջ:

КУЛЬТУРА КРУЖЕВОПЛЕТЕНИЯ АЛЕКСАНДРОПОЛЯ

Резюме *К. Базеян*

Кружевоплетение -одно из самых любимых и распространенных женских занятий Александрополя. Это обусловлено некоторыми факторами. В первую очередь, кружево являлось частью женского национального праздничного костюма, налобная часть головного убора которого расшита разноцветными кружевными цветочками. Второй, немаловажный фактор - городской быт с его разнообразием и обилием мебели, для украшения которого изготовлялись многочисленные кружевные изделия. Широкому распространению кружев способствовал также институт приданого, имевшего особое празднично-бытовое значение и считавшегося престижным культурно-бытовым явлением. На развитие кружевного дела в Александрополе большое влияние оказало открытие женских школ и училищ.

Женщины Александрополя владели разными способами изготовления кружев, но самым излюбленным являлись кружева из катушечных и шелковых нитей.

В бытовой культуре Александрополя кружевноплетение и кружевные изделия имели повседневно-бытовую, ритуальную, праздничную, престижную, эстетическую и этническую функции.

---

[19] *Ա. Ստեփանյան, Հայ ժողովրդական տարազի զարդանախշերի խորհրդիմաստը, թեկնածուական ատենախոսության սեղմագիր, Եր., 1996, էջ12:*

[20] *Մ. Օրմանյան, Ինքնակոչ բարեպաշտ, Եր., 1993, էջ 71:*